

«ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՊԱՇՏՊԱՆՍԻՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ՅԱՌԱՅՈՒՄՆԱԿ ԶԻՆՈՒՈՐՆ Ե ԵՂԱԾ»

Լ.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հինգշաբթի, 1 Յունիս 2015-ին, Ս. Եւ Ամմահ Պատարագ տեղի ունեցաւ Ս. Գրիգոր Լուսավորչի Մայր Տաճարին մէջ եւ ժողովուրդը բացող Նոր Տարուան առաւօտուն գոհաբանական ու երախտագիտական զգացումներով իր արժօքը բարձրացուց առ Աստուած:



Եկեղեցական արարողութեանց աւարտին, ներկաները ուղղութեան վեհարանի դահլիճը, լսելու Լ.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին պատգամը: Յանուն ներկայ ժողովուրդին եւ միաբանութեան, Հոգւոյ Տ. Նշան Արք. Լախոյեան ուղերձ ընթերցեց:

Նոր Տարուան բարեմաղթութիւնները փոխանցելէ ետք, Նորին Սրբութիւնը անդրադառնալով վերանորոգելու հրամայականին, ըսաւ. «Նոր Տարին իր հետ կը բերէ վերանորոգելու հաւատքը, յոյսը եւ վճռակամութիւնը: Մարդկային կեանքը կը ճահճանայ երբ հոսող ջուրին նման չվերանորոգուի: Հետեւաբար, այսօր մեր ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, հրամայական կարիքը ունի ինքզինք վերանորոգելու, որպէս անհատ, կազմակերպութիւն, գաղութ, ազգ, եկեղեցի եւ Հայրենիք: Կո՛չ կ'ուղղենք մեր ժողովուրդի գաւազներուն դառնալու Քրիստոսի, որպէսզի վերանորոգենք մեր անձերը հոգեւոր ու բարոյական արժէքներով, մեր մէջ վերականգնենք այն մարդը, որուն Աստուած ստեղծեց եւ ուզեց, որ իր հարազատ կոչումը իրագործէ այս երկրին վրայ բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ ու համարատուութեամբ»: Ապա, Արամ Ա. Կաթողիկոս խօսեցաւ ազգային ինքնութիւնը ամպրապնդելու հրամայականին մասին, յիշեցնելով, որ պէտք է կառչած մնանք մեր արմատներուն, յատկապէս ինքնութիւն արարողը եւ արմատ բճացող համաշխարհայինացած ներկայ աշխարհին մէջ:

Վերջապէս, Վեհափառ Հայրապետը կոչ ուղղեց գործնապէս արժեւորելու Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը Նշող 2015 թուականը: «Ցեղասպան թուրքը ջարդեց մեր ժողովուրդին մեկուկէ միկին գաւազները, մեր հոգեմտաւոր արժէքները թաւանուցեց, քանդուցեց ու կործանեց: Մեր ազգապատկան, եկեղեցապատկան եւ անհատական կալուածները կորուստուցեց ու բռնագրաւուցեց: Այս կացութեան դիմաց, ո՞ր հայը կրնայ պահանջատէր չդառնալ իր մարդկային ու ազգային իրաւունքներուն: 2015 տարին, մեր ժողովուրդին համար պիտի հանդիսանայ պահանջատիրութեան տարի: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ մեր ժողովուրդի պահանջատիրական պայքարին յառաջապահ զինուորն է եղած եւ այսօր վերանորոգ հաւատքով ու գիտակից յանձնառութեամբ պիտի շարունակէ իր պահանջատիրութեան պայքարը, այնքան առնել, որ տակաւին մեր ժողովուրդին իրաւունքները բռնաբարուած կը մնան ցեղասպան թուրքին կողմէ»:

Նոր Տարուան պատգամէն ետք, Վեհափառ Հայրապետը «պահպանիչ»ով օրհնեց ժողովուրդը: Ապա, երգուցեց «Կիլիկիա»ն եւ «Ի վեհ բարձանց» մաղթերգը: Աւարտին, ներկաները աջահամբոյրով ստացան Հայրապետական օրհնութիւն եւ բարեմաղթութիւններ կատարեցին իրենց հովուապետին:

ՅԵՏՄԻՉՕՐԷԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաճոյքն ունիք ծանուցելու, թէ Յունուար 2015-էն սկսեալ, պիտի սպասարկուի յետմիջօրէի դասընթացներ, Ալթիլիա-սի շրջանին մէջ, գլխաւորութեամբ եւ անմիջական մասնակցութեամբ Տիկ. Ալին Աշարեան Չաքարեանի, ինչպէս նաեւ մասնագետ ուսուցիչներու հսկողութեամբ:

Սոյն յետմիջօրէի դպրոցական յայտագիրը կ'ընդգրկէ լիբանանեան կրթական ծրագրի գիտական եւ լեզուական բոլոր դասընթացները:

Սոյն յետմիջօրէի դպրոցական յայտագիրը կը հաւաստիացնէ աշակերտին յաջողութիւնը, որովհետեւ ծրագիրը գլխաւորող պատասխանատու ուսուցիչները ունին մեծ փորձառութիւն ուսուցչական ասպարեզին մէջ:

Սոյն յետմիջօրէի դպրոցական յայտագիրին կրնան իրենց մասնակցութիւնը բերել 7-12րդ դասարանի աշակերտները, երկնոյեան ժամը 4:00-7:30:

Յաւելեալ տեղեկութեանց համար կարելի է կապ հաստատել, հեռաձայնելով՝ 03-331837 alineavsharian@windowslive.com Կառատունը ապահովուած:

AGBU

Հ.Բ.Ը.Մ. Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովը Սիրով կը հրաւիրէ Ձեզ ներկայ գտնուելու

Հ.Բ.Ը.Մ. - ի Ահրամճեան Կեդրոնի Դարմանատան Բացման Հանդիսութեան

Նուիրատուութեամբ՝ «Ուալիտ Պըն Թալալ» մարդասիրական հաստատութեան

որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունուար 3, 2015-ին, կ.ե. ժամը 4:00-ին, Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը-ի Ահրամճեան Կեդրոն- Ամանոս:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ

Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին առիթով, Երեքշաբթի 6 Յունուար 2015-ին, հանդիսաւոր Սուրբ Եւ Ամմահ Պատարագ պիտի մատուցուի Սուրբ Նշան Մայր եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝ **ԳԵՐՇ. Տ. ՇԱՐԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ** ԲԱՐԵՃԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Զարոզ Զրօրիւնք

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը ներկայ գտնուելու Սուրբ Պատարագին՝ հաղորդուելու ու զօրանալու համար Բեթղէեմեան խորհուրդով:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազան Հայրը, Սուրբ Աստուածայայտութեան տօնին առիթով, շնորհաւորութիւնները պիտի ընդունի ԵԱՂԱԶԻ ԱՉԱԳՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԱՅՐԵՆԻՆ ԵՄԷ, պատարագի աւարտէն ետք մինչեւ ժամը 1:00 իսկ կ'ետք ետք ժամը 4:00-էն 6:00:

ԴԻԱՆ ԱՉԱԳՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՆՈՐ ՀԱՃՆՈՅ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ

Ուրախութեամբ կը յայտարարենք մեր հաւատացեալ ժողովուրդին թէ Երեքշաբթի, 6 Յունուար 2015-ին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով, տեղի պիտի ունենայ Սուրբ Եւ Ամմահ Պատարագ:

Պիտի Պատարագէ եւ Զարոզէ՝ **Գերապատիւ Տ. Յուսիկ Ծայրագոյն** վարդապետ Մարտիրոսեան

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Զարոզ Զրօրիւնք

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու հոգեպարար Սուրբ արարողութեան եւ լսելու հայր Սուրբին Պատգամը:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ԺԻՆԻԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ

Ուրախութեամբ կը յայտարարենք մեր հաւատացեալ ժողովուրդին թէ Երեքշաբթի, 6 Յունուար 2015-ին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով, տեղի պիտի ունենայ Սուրբ Եւ Ամմահ Պատարագ:

Պիտի Պատարագէ եւ Զարոզէ՝ **Հոգեշնորհ Տ. Պետրոս Արք. Մանուէլեան**

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Զարոզ Զրօրիւնք

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու հոգեպարար Սուրբ արարողութեան հաղորդուելու համար օրուան խորհուրդով:

Ծանօթ: Ս. Պատարագէն ետք եկեղեցոյն Տիկնանց միութիւնը կ'ազմակերպած է փոքրիկներու յատուկ յայտագիր մը մասնակցութեամբ «Ուրախ տարեդարձ» խումբին, որ տեղի պիտի ունենայ եկեղեցոյ Կարօ Գոնիալեան սրահին մէջ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Հայոց Ցեղասպանութեան 100-Ամեակին ձօնուած ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան 2015-ի օրացույցը



Օրացույցին իրաքանչիւր ամսուայ էջը զարդարուած է Հայոց Ցեղասպանութիւնը խորհրդանշող նկարչական գործով մը, որոնք ստեղծագործութիւններն են, գեղանկարչի՝ Գրիգոր Լորիկեանի ՄՏԱՆԱՌՈՒ ՇԱՄԱՐ ԴԻՄԻՆԻ, ԹԵՔԵՆԵԱՆ ԿԵՐՈՐԱՆ:

ԱՄԵԼԻ ԸԱՆ 900 ԽԱԽՏՈՒՄ ԵՒ 11 ՀԱՉԱՐ ԿՐԱԿՈՑ

Լեռնային Դարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան բանակի տուեալներուն համաձայն՝ 21-27 Դեկտեմբերին դարաբաղեան-ազրպէյճանական հակամարտութեան զօրքերու շփման գիծին մէջ հակառակորդը զինադադարի պահպանման դրութիւնը խախտած է շուրջ 900 անգամ, որուն ընթացքին տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ հայ դիրքապահներուն ուղղութեամբ արձակուած է աւելի քան 11,000 կրակոց:

Բացի զինադադարի դրութեան խախտումներէն՝ ազրպէյճանական բանակի յատուկ ստորաբաժանումները պաշտպանութեան բանակի հարաւարեւելեան, արեւելեան եւ հիւսիսարեւելեան ուղղութիւններով ձեռնարկած են հետախուզական-ներթափանցման գործողութիւններու, որոնց ընթացքին կիրարկած են տարբեր տրամաչափի հրաձգային զենքեր, որոնց կարգին՝ ձեռքի նռնակներ, նաեւ ակասնապատած են միջդիրքային տարածքի որոշ հատուածներ:

Պաշտպանութեան բանակի առաջապահ ստորաբաժանումները ժամանակին զգացած են հակառակորդի յառաջխաղացքի փորձերը եւ անոնց կորուստներ պատճառելով՝ ստիպած են նահանջել իրենց ելման դիրքերը:


Ականազերծման գործողութիւններու եւ հակառակորդին դիմադրելու ընթացքին հայկական կողմը կորուստներ չէ տուած:

Հայկական զօրամասերը հաստատ կերպով կը տիրապետեն առաջին գիծի իրարութեան եւ անհրաժեշտութեան պարագային կը դիմեն պատասխան գործողութիւններու:

ՄԵՐՁԱՌՈՐ ԱՐԵՒԵԼԷԻ ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ Կեդրոնական Մարմին Լիբանան ՓԱՌՎԱԸՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆԸ Ի Յիշատակ ՎԵՐ. ՈՊՊԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ 1927-2014 (Հոգեւոր Հովիւ, ԸՆԿԵՐԱՅԻՆ Գործիչ) Կիրակի, 18 Յունուար 2015, կ'ետօրուան ժամը 12:00-ին Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցիին մէջ, Մեքսիք փողոց, Պէյրութ:

ՄԵՐՁԱՌՈՐ ԱՐԵՒԵԼԷԻ ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ Ար. Ծննդեան Տօնին առիթով, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահն ու Կեդրոնական Մարմինը շնորհաւորութիւններ պիտի ընդունին Երեքշաբթի 6 Յունուար 2015ին, կ'ետօրուան ժամը 12:00-էն մինչեւ կ.ե. ժամը 2:00, Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցիի ընդունելութեանց դահլիճին մէջ, Մեքսիք փողոց, Պէյրութ: Ս.Ա.Հ.Ա.Ե.Միութեան Կեդրոնական Մարմին ԴԻԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՉԱՐԹՕՆԸ 2015» ԲԱՑԱԳՈՒԿԸ



Մեր յարգելի ընթերցողներուն կը յայտնենք, թէ արդէն իսկ հրապարակի վրայ է ազգային, քաղաքական, հայրենական, լիբանանեան, միջազգային, պատմական, մշակութային, մարզական, կնոջական, ժամանցի եւ այլ ենթաբաժիններով «ՉԱՐԹՕՆԸ 2015» բացառիկը: «ՉԱՐԹՕՆԸ 2015» բացառիկը կարելի է ստանալ օրաթերթի ցրուիչներէն, գրախանութիւններէն եւ խմբագրատուկէն:

Մարզական

ՉԵԼՍԻ ՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ՍԿԱՒԵՆՈՐ ՏԱՐԻՆ

Չելսի պարտութեամբ դիմաւորեց Նոր Տարուան առաջին օրը, երբ 5-3 արդիւնքով խոնարհեցաւ Լոնտոնի իր մրցակիցներէն Թոթեմհամի անակնկալ յարձակումներուն առջեւ:

Հակառակ այն իրողութեան որ Տիեկո Գոսթա Նշանակեց մրցումին առաջին կողմ, առաջին կիսախաղը վերջ գտաւ Թոթեմհամի առաւելութեամբ 3-1: Հերի Գեյն, Տենի Ռոզ եւ Աստրոս Թուոսնեստ Նշանակեցին «Սփըդը»-ի կողմը: Բ. Կիսախաղին, Էտին Հագարտ կրճատեց Թոթեմհամի առաւելութիւնը, սակայն Նասեր Չատլիի հինգի բարձրացուց Թոթեմհամի Նշանակած կողմը: Ճոն Թերրի Նշանակեց Չելսիի երրորդ եւ մրցումին վերջին կողմ: Պարտութիւնը բաւական ցնցիչ էր յատկապէս Չելսիի մարզիչ ժոզէ Մուրինիոյի համար: Ան անմիջապէս իրաւարարներուն յղեց իր խումբին պարտութեան պատասխանատուութիւնը:

Չելսիի պարտութենէն լաւագոյն օգտուողը դարձաւ Մանչեսթըր Սիթին: Ան 3-2 արդիւնքով դժուար յաղթանակ մը տարաւ Սանտերլանտի դէմ: Եայիա Թուրե յառաջ մղեց «Տը Սիթի»-ը իր խումբին: Սթեֆան Եովէթիչ անցուց երկրորդ մը: Սանտերլանտ հակադարձեց: Ան Ճէ Բոտուէյի եւ Ատամ Ճոնսոնի կողմէն շնորհիւ հաւասարեցուց հաշիւը: Սակայն, հանդիպումին վերջին խօսքը կը պատկանէր Ֆրանք Լամփարտին, անոր Նշանակած կողմ ոսկէ յաղթանակ մը պարգեւեց Մանուէլ Փելլիքի-նիի խումբին: Սոյն յաղթանակին շնորհիւ, Չելսի եւ Մանչեսթըր Սիթի հաւասար կէտերով կը գրաւէն ընդհանուր դասաւորման առաջին եւ երկրորդ դիրքերը: Նշենք, թէ ամերիկեան Նիու Եորք Սիթի խումբէն մինչեւ Յունուար փոխառուութեան տրուած Ֆրանք Լամփարտ, մինչեւ սոյն մարզական տարեշրջանի աւարտը պիտի կրէ Սիթիի շապիկը: Սիթիի տնօրէնութիւնը Նոր համաձայնութիւն մը յաջողեցաւ կնքել Նիու Եորք Սիթիի հետ եւ երկարած լամփարտի փոխառութեան պայմանաւճարը:

Սիթիի պարտութեան իր հոգաւոր մարզիչ Ճոն Գարքըրի հովանաւորութեան տակ 3-3 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Պըրլիկի դէմ: Սիթիի մարզիչ Ալէն Փարտիոն շատ հաւանաբար ստանձնէ Գրիսթալ Փայալը: Լիվըրպոլ յուսալիցութեան մատնեց իր համակիցները, երբ սեփական դաշտին մէջ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց ընդհանուր դասաւորման վերջին դիրքը գրաւող Լեսթըր Սիթիի դէմ: «Կարմիրներ»ը, շնորհիւ Սթիվըն Ճեռարտի կողմէն, կը վայելէին 2-0 առաւելութիւն մը, սակայն պաշտպանողական աններելի սխալներու հետեւանքով «Արուսներ»ը յաջողեցան կարեւոր կէտեր կորցնել Լիվըրպոլի դէմ:

Սոյն մրցումէն ետք, Լիվըրպոլի խմբապետ Սթիվըն Ճեռարտ պաշտօնապէս յայտարարեց, թէ եղանակի աւարտին պիտի հեռանայ ակումբէն: Ճեռարտ 695 մրցում կատարած է Լիվըրպոլի շապիկով, Նշանակելով 180 կոլ: Ան 11 տարբեր բաժակներ շահած է Լիվըրպոլի հետ:

Մատչեմթըն 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Արսենալը: Սատիո Մանէ եւ Տուսան Թատիչ Նշանակեցին «Սուրբեր»ուն կողմը: Մանչեսթըր Եուայթըտ բախտաւոր հաւասարութիւն մը արձանագրեց Սթըր Սիթիի դէմ: Սուլանի Սիթի - Եուսթի Փարք Ռէյնըրը եւ Ուեսթ Համ Եունայթըտ - Ուեսթ Պրոմուիչ Ալլիան հանդիպումները վերջ գտան 1-1 հաւասարութեամբ:

Հոլ Սիթի 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Էվըրթընը: Աստրոս Վիլա 0-0 հաւասարութեամբ աւարտեց Գրիսթալ Փայալի դէմ հանդիպումը:

Մանչեսթըր Սիթի՝	20 մրց. 46 կետ
Չելսի՝	20 մրց. 46 կետ
Մանչեսթըր Եունայթըտ՝	20 մրց. 37 կետ
Ստուփթըն՝	20 մրց. 36 կետ

ԵՐՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱՉԳԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Զմեռնային կարճատեւ դադարէն ետք, Կիւրտանութեան մրցումները պիտի վերսկսին Սպանիոյ եւ Իտալիոյ մէջ: Անգլիոյ մէջ տեղի պիտի ունենան բաժակի երրորդ հանգրուանի մրցումները:

Ստորեւ Անգլիոյ եւ Սպանիոյ մէջ տեղի ունենալից կարեւոր հանդիպումներուն յայտագիրը:

ՇԱԲԱԹ, 3 ՅՈՒՆԻՈՒՐ 2015

ԱՆԳԼԻԱ - ԲԱԺԱԿ՝ Գ. ՀԱՆԳՐՈՒՄ	
Պոլթըն - Ուիկան	ժամը՝ 17.00
Տըրքի Գաուլթի - Սաութհորթ	ժամը՝ 17.00
Ֆուլհամ - Վուլվը	ժամը՝ 17.00
Լեսթըր Սիթի - Նիուքասլ Եունայթըտ	ժամը՝ 17.00
Փրեսթըն - Նորուիչ Սիթի	ժամը՝ 17.00
Թրէյնլեր Ռովըրզ - Սուանսի Սիթի	ժամը՝ 17.00

ՍՊԱՆԻԱ - ԼԱ ԼԻԿԱ	
Աթլետիքո Սատրիտ - Լեվանթ	ժամը՝ 17.00
Սելիվա - Չելթա Վիլո	ժամը՝ 19.00
Էլչէ - Վիլառէալ	ժամը՝ 21.00
Տեփորթիլո Լա Գրուսա - Աթլետիք Պիլասո	ժամը՝ 23.00
Մալայա - Ալմերիա	ժամը՝ 23.00

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Երեքշաբթի, 6 Յունուար 2015-ին, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Հայրապետական հանդիսաւոր Ս. եւ Անմահ Պատարագ պիտի մատուցուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ Հայրապետական իր պատգամը ուղղել՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժամերգութիւն՝	ժամը 8-ին
Ս. Պատարագ՝	ժամը 10-ին
Քարոզ՝	ժամը 11-ին
Ջրօրհնէք՝	ժամը 11.30-ին

Սուրբ Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարուի Կաթողիկոսարանիս «ՇՆՈՐՀԱԼԻ» երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ Հոգ. Տ. Գարեգին Աբր. Շիրտմեանի:

Սիրով կը իրաւորուի հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Պատարագին, լսելու Վեհափառ Հայրապետին Պատգամը եւ հաղորդուելու Ս. Ծնունդի խորհուրդով:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Ծանօթ.- Սուրբ Պատարագէն ետք, Վեհափառ Հայրապետը շնորհաւորութիւններ պիտի ընդունի Վեհարանի դահլիճին մէջ, մինչեւ ժամը 1:30, եւ կ.է. ժամը 4-7: Իսկ յաջորդ օր՝ Չորեքշաբթի, առաւօտեան ժամը 10-էն յետմիջօրէի ժամը 1:

Յայտնենք, որ ԽՅՄԱՆ ԵՐԵՎԱՆԻ, ԵՐԿՈՆԱՅԻՐ, 5 Յունուար 2015-ին, ՃՐԱԳԱԼՈՅՅԻ Ս. Պատարագը պիտի մատուցուի երեկոյեան ժամը 4-ին: Իսկ Չորեքշաբթի 7 Յունուարին, ՄԵՆԵԼՈՅ ՅԻՇՃԱՏԱԿԻՆ, դարձեալ Ս. Պատարագ պիտի մատուցուի Մայր Տաճարին մէջ, առաւօտեան ժամը 10-ին:

ՄՐՏԻ ԿՈՉ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇՐՋԱՆԱԿԱՆ ԼԻԲԱՆԱՏԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Սիրելիներ, կ'ողջունեմ ձեզ Նոր Տարուան սեմին, ցանկալով ձեզ եւ ձեր ընտանիքներուն բարի մուտք 2015 թուին: Վստահ եմ, որ ձեզմէ իւրաքանչիւրը իր մտքին ու սրտին մէջ անկնիւր ունի զինք յուզող ու մտահոգող հարց մը: Հարց՝ որ չենք կրնալ չնկատել, հարց՝ որ մեզմէ իւրաքանչիւրը կը յուզէ, հարց՝ զիտակցութեան մեր Մայր Հայրենիքի որը ու աղքատ երեխաներու նկատմամբ: Արդեօք երբեք կը յիշե՞ք ուսանելու մեր ցանկուղիները, սակայն նիւթերի բացակայութիւնը ու ապրուստի դժուարութիւնը, որոնք միեւնոյն մեզ ուսանելու Հայաստանի մէջ: Մենք ուրախացանք, ուսանեցանք, ստացանք համալսարանական վկայական, ունեցանք մեր գործ ու դիրքը Լիբանանի մէջ (եւ կամ այլուր), վայելեցինք մեզի ընծայուած բարիքը, որ Հայրենիքը տուաւ մեզի:

Եկէք սիրելիներ այս Նոր Տարուայ սեմին, Եղեռնի 100-ամեակին ընդառաջ համախմբուիք, կարծիքներ փոխանակեք, ձեռնարկեք, թէ ի՞նչ միջոցներով կրնանք մեր երախտագիտութիւնը յայտնել Հայրենիքին՝ օգնելով եւ սատարելով այսօրուայ ոչ դիւրին կացութեան մէջ գտնուող աղքատ, որը մատաղ սերունդին:

Թող 2015 թուականը ձեզի համար ըլլայ առողջ ու բարեբեր տարի:

ՄԱԹԵՈՍ ՄԱԹԵՈՍԵԱՆ
Տըքթոր-ատամնաբոյժ

ԱՅՍՕՐ ՊԱՏՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ 3 ՅՈՒՆԻՈՒՐ

- * 1803՝ ծնաւ հայ գրող Մետրոպ Ռադիադեանը (մահացաւ՝ 1858):
- * 1851՝ ֆրանսացի գիտնական Լէօն Ֆուկո հնարեց ճօճանակը:
- * 1901՝ մահացաւ արեւմտահայ գրող Սրբուհի Տիւսաբը (ծնեալ՝ 1841):
- * 1924՝ ծնաւ հայ գրող Ստեփան Ալաշաջեանը (մահացաւ՝ 2010):
- * 1956՝ ծնաւ աստրալիացի դերասան Մէլ Կիպլընը:
- * 1959՝ Ալաքա դարձաւ Միացեալ Նահանգներու 49-րդ նահանգը:
- * 1969՝ ծնաւ ֆորմիլա 1 ինքնաշարժներու վարորդ Մայքըլ Ծումախըրը:

Our e-mail addresses are:



zartonkadl@gmail.com

zartonkdaily@yahoo.com

website:
www.zartonkdaily.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ողբացեալ ժամ (Շաբաթ) Շահինեանի մահուան 30-րդ տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Նորշէնի Ս. Կարդանանց Եկեղեցոյ մէջ, Կիրակի 4 Յունուար 2015-ին, յաւարտ Ս. Պատարագի:



La Souderie DE LUNETTES

Lunettes Solaires et Médicales
1400 modèles à partir de 10\$
Autoroute Jdeideh - Tél. (01) 870016 - Prés Boghos Optic

ՈԱՍԿԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
Պայքար Ակումբ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՆԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ՝ Լիբանանի Շրջանային Կարչութեան

Կ'երգէ՝ Գօգօ Սկրտիչեան

Մասնակցութեամբ՝ պուզուքիստ Յարութ Կուլուզեանի

Տեղի կ'ունենայ երեքշաբթի, 6 Յունուար 2015-ին, երեկոյեան ժամը 9-էն սկսեալ Թէրեան Կեդրոնին մէջ, ժամը 11-ին: